# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
2024 թ.
№ 14 (1130)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ՀՊՄՀ ՌԵԿՏՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ



Սիրելի՛ ուսանողներ և դասախոսներ, աշակերտներ և ուսուցիչներ, շնորհավորում եմ նոր ուսումնական տարվա մեկնարկի՝ Գիտելիքի ու դպրության օրվա առթիվ:

Մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը կրող համալսարանում սովորելն ու աշխատելը առաջին հերթին մեծագույն պատասխանատվություն ու առաքելություն է սերունդների առջև, որոնց դուք կրթելու եք:

Շնորհավորում եմ 2024-2025 ուսումնական տարվա առթիվ, մաղթում եմ խաղաղ և բարօր երկրում կրթվելու և ստեղծագործելու անսպառ եռանդ: Օրը խորհրդանշական է հատկապես Մանկավարժական համալսարանի 1-ին կուրսերի ուսանողների համար. ուզում եմ հավատացած լինել, որ այս պահից սկսած կծգտեք լինել լավ մասնագետ ու հատկապես՝ լավ ուսուցիչ, և որպես ջահակիր՝ լույս ու գիտելիք կտարածեք ամենուր՝ բոցավառելով հայրենատեր նոր սերունդների:

Վստահ եմ, որ համատեղ աշխատանքի, անխախտ հավատի ու անսպառ նվիրումի շնորհիվ կկարողանանք գործով ու կրթվելու ձեր պատրաստակամությամբ նորովի արժևորել ուսուցչի կերպարն ու համբավը, որ հաջորդիվ ունենանք մանկավարժների առավել հզոր բանակ:

Սիրելի՛ սովորողներ և աշխատողներ, պատասխանատվությամբ և սրտացավությամբ մոտեցեք ձեր ընտրած մասնագիտությանն ու աշխատանքին, զգուշությամբ այն վեհ կոչմանը, որը բոլոր ժամանակներում ունի անփոխարինելի առաքելություն: Լիահույս եմ, որ ուսումնական տարին կսկսենք գիտության և կրթության ոլորտի առջև ծառացած մարտահրավերները միասնաբար հաղթահարելու ձգտումով. այդ ճանապարհին ուսուցչի և դասախոսի, աշակերտի և ուսանողի կողքին է մանկավարժական Մայր դարբնոցը՝ իր հնարավորությունների ողջ զինանոցով աջակցելու կրթության գործի նվիրյալներին

Բարի երթ և արգասաբեր ուսումնական տարի եմ մաղթում:

***Սրբուհի ԳԵՎՈՐԳՅԱՆ***
***Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր***

**Հեղինե Բաբաջանյան**

### ՈՂՋՈՒՅՆ, ԴՊՐՈՑ

Ողջո՛ւյն, դպրոց,
Մտքի հնոց,
Եվ՝ անպատճառ,
Ուսող կաճառ:
Սեպտեմբեր է,
Ուսման սեր է,
Գիտությունը
Ամենից բեռ է:
Ով միտում է –
Նա գիտուն է,
Մտքին նոր միտք
Միշտ կիտում է:
Ով գիտուն է–
Պրպտուն է,
Լուծումները
Հեշտ գտնում է:
Մեր լավ դպրոց՝
Կյանքի հնոց,
Դու աղբյուրն ես
Գիր ու գրոց:
Ուսուցիչներ,
Ձեզ սիրում ենք,
Մտքերս չեզ
Սևեռում ենք:
Մեզ գիտություն
Ուսուցանեք,
Իմաստության
Սերմեր ցանեք,
Դուք գիտության
Սերմնացանն եք:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

2024-2025 ուսումնական տարվա մեկնարկը տրվեց Մանկավարժական համալսարանում, Հենակետային ավագ դպրոց-վարժարանում և ՀՊՄՀ N 57 հիմնական դպրոցում: Տոնական մթնոլորտում դիմավորեցին համալսարան ընդունված 1-ին կուրսերի ուսանողներին և համալսարանական դպրոցների սաներին:

Մանկավարժական համալսարանն իր կրթական կառույցներով փորձառության մեծ դպրոց է ուսանողների ու աշակերտների համար, կրթության ջահը սերնդեսերունդ փոխանցող մանկավարժների ու սաների դարբնոց:

Կանաչ ու ճերմակ օդապարիկներով զարդարված Վ. Թոթովենցի անվան N 57 հիմնական դպրոցի բակում տոնական տրամադրություն էր: 61 առաջին դասարանցի՝ դասվարներ Տաթևիկ Աբրահամյանի և Ագրաֆինա Հովհաննիսյանի հետ հնչեցրին դպրոցական զանգը: Ուսուցիչներն ու ծնողները հետևում էին փոքրիկների ուրախ ու զարմացած հայացքներին՝ նրանց խաղաղ ու բարի երթ մաղթելով:

Ավագ ընկերները ողջունեցին փոքրիկներին: Հայաստանի Հանրապետության օրհներգի հնչյունների ներքո սեպտեմբերյան մեկ օր էլ բացվեց՝ հույսով ու հավատով, գիտելիքների ձեռքբերման հանդեպ պատասխանատվությամբ:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը մաղթեց, որ փոքրիկների կյանքի առաջին զանգը նրանց հոգիներում լուսավոր ղողանջներ արթնացնի, որ այդ ղողանջներն ավետեն միայն բարի լուրեր. «Կրթությունը լույս է, և հաջողում են միայն այն հասարակությունները, պետությունները, որտեղ կրթությունը կարևորվում է: Մեր ազգային հոգեկերտվածքի շնորհիվ մենք միշտ արժևորել ենք գիրը, գրականությունը, գիտությունը: Սովորելը, կրթվելն այնքան էլ դյուրին գործ չէ. այսօրվանից ձեզ համար սկսվում է այդ դժվարին, բայց հետաքրքրություններով լեցուն ճանապարհը: Լիահույս եմ՝ դուք մեր ապագան կերտողներն եք և այդ դժվարությունները հաղթահարելու եք: Բարի երթ ձեզ: Թող անխաթար լինի այդ երթը: Բարի գալուստ»:

Գիտելիքի և դպրության տոնը շարունակվեց երգերով՝ նվիրված դպրոցին, ուսուցիչներին ու կրթությանը: Դպրոցը նորից լցվեց երեխաների աշխույժ ու զրնգուն ծիծաղով՝ փաստեցին ավագ դպրոցականները:

Այնուհետև մեծ տուփի մեջ առաջին դասարանցիները փնտրեցին ու գտան գիտելիքի դուռը բացող բանալին, գիտելիքի դուռը բացեցին ու մի քիչ վախվորած, մի քիչ էլ վստահ ներս մտան:

Երգերի, ծափերի, ուսուցիչների լուսավոր հայացքների ուղեկցությամբ նրանք մտան Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնական դպրոց՝ որպես փոքրիկ ծիլեր, որ օրերի հետ գեղեցիկ բողբոջներ են տալու՝ դպրոցական միջավայրը լցնելով իրենց վառ ու փթթուն ժպիտներով:

Տոնական մթնոլորտում դպրոցն ընդունեց նաև 2-9-րդ դասարանների աշակերտներին: Նոր ուսումնական տարում Վ. Թոթովենցի անվան N 57 դպրոցում այս տարի կսովորի 540 աշակերտ: Դասվարների ու դասղեկների, ուսուցիչների ուղեկցությամբ սովորողները ոտք դրեցին դպրոց. նոր ուսումնական տարվա առաջին դասն սկսվեց՝ որպես խաղաղության ու ջերմության հոգևոր պատվար, որպես գիտելիքին ու կրթությանը նվիրումի շարունակական երթի մեկնակետ:

***Միլվա ԱՍՐՅԱՆ***

# Հայրենիքում մենք լցվեցինք հայրենիքով

Մանկավարժական համալսարանում հուլիսի 26-ին ամփոփեցին սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա դասընթացները:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց բոլորին՝ ընդգծելով, որ դասընթացներն անց են կացվել նոր չափորոշիչներին համապատասխանող ծրագրերով, դասախոսական պատրաստված կազմով:

ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Արթուր Մարիտիրոսյանն ամփոփեց դասընթացների ավարտը, կարևոր շեշտադրումներ արեց մեր երկրում իրականացվող կրթական ռազմավարության և սփյուռքի կրթամշակութային միջավայրի ակտիվացմանը միտված աջակցության մասին: Փոխնախարարն իր գոհունակությունը հայտնեց՝ լավ է, որ Մանկավարժական համալսարանը շահեց դասընթացների կազմակերպման մրցույթը՝ միաժամանակ ընդգծելով, որ 7 ուղղություններով կազմակերպված դասընթացները ոչ միայն դասավանդողների, այլև կրթության կազմակերպիչների համար էր, և որ դասընթացների ծրագիրը ոչ միայն կրթական, այլև մշակութային ու ճանաչողական բնույթ ուներ:

14 երկրից՝ Բրազիլիայից, Հնդկաստանից, ՌԴ-ի տարբեր քաղաքներից և այլ երկրներից ժամանած 60 ուսուցիչների համար դասընթացները լավագույն հարթակ էին նաև իրար հետ շփվելու և փորձի փոխանակման համար:

«Հայաստանում իրականացվող կրթամշակութային քաղաքականությունը լայնամասշտաբ է,-ասաց Արթուր Մարտիրոսյանը՝ կարևորելով նախարարության ջանքերը պետական ֆինանսավորմամբ սփյուռքում հայագիտական կենտրոնների ընդգրկուն ցանց ստեղծելու գործում:-Մենք Հայաստանում ամեն ջանք գործադրում ենք որակյալ կրթության ապահովման համար՝ աշխարհի զարգացումներին համահունչ, իսկ սփյուռքում՝ հայագիտությունն ու հայ մշակույթը զարգացնելու համար»:

Փոխնախարարը կարևորեց ուսուցիչների դերը սփյուռքում՝ ասելով, որ նրանք բախվում են մշտնջենական մարտահրավերներին և գտնվում են պայքարի առաջնագծում, ապա հույս հայտնեց, որ սփյուռքահայ ուսուցիչները հետաքրքիր քննարկումներ են ունեցել դասընթացների ընթացքում, որ կաշխատեն ընդլայնել դասընթացներին մասնակցող ուսուցիչների աշխարհագրությունը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը հորդորեց ուսուցիչներին խոսել դասընթացների որակական բովանդակության, պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի, ծրագրային մոտեցումների և հիմնախնդիրների վերաբերյալ՝ հետայսու ունենալու համար ավելի բովանդակային ծրագրեր. «Հուսով ենք՝ երկխոսությունը շարունակվելու է, հաշվի առնելով այն մարտահրավերները, որոնք առկա են այսօր կրթության ոլորտում՝ հայապահպանության, սփյուռքում կրթության, հայկական դպրոցների և առհասարակ սփյուռքում ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ»:

Ուսուցիչների անունից ելույթ ունեցավ Մոսկվայի Լազարյանների անվան միջնակարգ պետական հանրակրթական դպրոցի ուսուցիչ Թամարա Մաթևոսյանը:

Նա իր գոհունակությունը հայտնեց բարձր մակարդակով կազմակերպված դասընթացների առթիվ:

«Մենք բոլորս շատ լավ հասկանում ենք, որ մենք հայոց լեզվի, հայ գրականության և մշակույթի դեսպաններն ենք տարբեր երկրներում, որ մենք մեծ արժանապատվությամբ պետք է իրականացնենք հայ ուսուցչի առաքելությունը՝ սփյուռքում ազատելու հայ երեխաներին ուծացման ճանկերից: Սիրելի՛ ուսուցիչներ, շատ պատասխանատու է մեր գործը. Մենք այն ամուր կամուրջն ենք, որը կապում է հայրենիքը սփյուռքի հետ: Եվ այդ կամուրջը խաթարվելու իրավունք չունի: Ոչ մի պարտություն չի կարող մեզ վհատեցնել և հուսահատեցնել: Եկեք լցվենք համբերությամբ, արժանապատվությամբ ապրենք մեր պատմության այս ծանր պահերը, բայց երբեք չմոռանանք, որ մենք մեր ժողովրդի պատմության կրողներն ենք և այն պետք է փոխանցենք սերունդներին, բարձր պահենք սերունդների ոգին, հիշենք, որ մենք ժառանգորդն ենք և պահանջատերը մեր հին պատմության:

Հայրենիքում լինելու ընթացքում մենք լցվեցինք հայրենիքով, լիցքավորվեցինք զանազան իրարամերժ զգացմունքներով, որը կտանենք մեզ հետ՝ լցնելու մեր ժամանակը: Մենք ոգեղեն ոգևորության կարիք ունենք»,-ասաց նա:

Թամարա Մաթևոսյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը և սիրելի Մանկավարժական համալսարանին, որտեղ պատիվ է ունեցել սովորելու: Նա դասախոսներին նվիրեց իր գրած «Ուսուցչին» բանաստեղծությունը:

Հանդիպումը եզրափակվեց հավաստագրերի հանձնմամբ և Վլադիկավկազում դասավանդող, դասընթացների մասնակից Համեստ Խաչատուրյանի գրած «Տանում եմ սերը» հեղինակային երգով, որը կատարեցին դասընթացի մասնակից ուսուցիչները:

Երբ կտխրես օտար երկրում,
Կթափառես փողոցներում,
Ու կփնտրես հայի աչքեր,
Ուրախ ու ջերմ պայծառ օրեր,
Իմ լավ ընկեր, դու ինձ հիշիր
Ու երգը այս ինձ հետ երգիր,
Իսկ ես սերն ու կարոտն առած՝
Հեռանում եմ՝ երգս թողած:
Տանում եմ սերը, հայի աչքերը,
Բարի հուշերը լավ օրերի,
Տանում եմ սերը, սիրուն աչքերը,
Բարի դեմքերը ընկերներիս:
Գնա շողա մութ երկնքում,
Աղոթք ու հույս հոգուդ խորքում,
Աչքդ հեռու լեռան հառած,
Որ չդողա ձյունից սառած:
Իմ լավ ընկեր մի մոռացիր
Ու երգը այս ինձ հետ երգիր,
Իսկ ես սեր ու կարոտն առած՝
Հեռանում եմ հույսով լցված:

*Սիլվա ԱՍՐՅԱՆ*

# Ներկայացնում են սփյուռքահայ ուսուցիչները

**Նաիրա Թորոսյան**

- Եկել եմ Սվերդլովսկի շրջանի Եկատերինբուրգ քաղաքից: Քաղաքում գործում է մեկ մեկօրյա կիրակնօրյա հայկական դպրոց, որը 30 տարեկան է: Ես այնտեղ աշխատում եմ 2015 թվականից: Դպրոցում գործում են բազմաբնույթ խմբակներ. ոչ միայն լեզու և գրականություն է դասավանդվում, այլև պատմություն: Դպրոցում 10 ուսուցիչ է աշխատում: Աշխատում ենք Երազիկ Հարությունյանի մշակած ծրագրով, որն արդյունավետ է դեռ մեր դպրոցի համար:

Մեզ մոտ կա 1-ից մինչև կրտսեր, ավագ և միջին խմբեր: Ես դասավանդում եմ ավագ խմբում, որտեղ 16-ից մինչև 37 տարեկաններ են սովորում: 1-2 ռուսներ էլ կան, որոնք ուսումնասիրում են հայերեն:

Դպրոցում 300-ի հասնող աշակերտ ունենք: Շուրջ 5 տարի է՝ դպրոցի տնօրենը Արմեն Բաղդասարյանն է: Նա պատմության մասնագետ է, բազմակողմանի զարգացած մարդ: Շուրջ երեք տասնամյակ համայնքի ղեկավարն է Մասիս Նազարյանը, ում մենք շատ շնորհակալ ենք, և ով մեզ անվճար տրամադրում է դասագրքերը:

Քանի որ 10 տարուց ավելի է բոլոր ուսուցիչներս ապրում ենք Եկատերինբուրգում և բավականին հեռու ենք Հայաստանի կրթական համակարգից, այս դասընթացի ընթացքում կիրառվող մեթոդներից ինձ հետաքրքրիր էր, թե ռուսախոս հասարակության մեջ ապրող հայերին ինչպես կարելի է առավել մատչելի հայերեն սովորեցնել. խնդիրը ոչ միայն տառուսուցումն է, այլև մեր պատմությունն ու գրականությունը, մեթոդները: Նաիրա Տողանյանից, Լիլիթ Տեր-Գրիգորյանից, Գրետա Հակոբյանից սովորած մեթոդներն ու գործիքակազմը մենք անպայման կկիրառենք մեր դասընթացներին:

Տպավորությունները հրաշալի են, մեկ բառով հնարավոր չէ արտահայտել: Ես առաջին անգամ եմ հայրենիքում մասնակցում վերապատրաստման դասընթացներին: Ուրիշ վերապատրաստումների մասնակցել եմ, բայց սա տարբերվում էր մյուսներից: Հրաշալի տպավորություններ եմ ստացել, «հրաշալի» բառը դեռևս քիչ է տպավորություններս բնորոշելու համար. ընդգրկուն դասերը, շրջայցերը, դասախոսների մոտեցումները շատ արդյունավետ էին և հաստատ մեզ կտա արգասաբեր գործունեություն:

**Գայանե Արշակյան**

- Ուկրաինայի հայերի միության հայերենի հեռակա դասընթացների, հայոց լեզվի ուսուցչուհի եմ: Ապրում եմ Օդեսա քաղաքում: Ծրագիրն սկսվել է 2024 թվականից: Առաջին փուլն ավարտվել է շատ լավ արդյունքներով: Ես 150-200 աշակերտ ունեմ, առցանց դասընթացների հեղինակը ես եմ: Ուկրաինայի հայերի մեծ մասն այսօր ապրում է աշխարհի տարբեր երկրներում: Այս ծրագրի ընթացքում ես սովորեցրի այբուբենը, քերականությունից որոշակի հատված, մշակույթ: Սեպտեմբերից կունենանք ընդունելություն, կանցնենք ուսուցման երկրորդ փուլին. քննության առցանց թեստերը հայերենի իմացության, տառաճանաչության, մեր մշակույթի մասին կլինի:

Այս դասընթացների ծրագիրը շատ հետաքրքիր էր, դասախոսական կազմից շատ տպավորված եմ: Մեզ սովորեցրին մեթոդներ, որոնց ծանոթ չէինք: Սփյուռքում ապրող ուսուցիչների ընդհանուր խնդիրների մասին մենք խոսեցինք դասախոսների հետ:

Մատուցված մեթոդաբանությունը, առցանց նյութեր գտնելու հնարավորությունները մեզ մեծապես օգնեցին: Հանդիպումներ ունեցանք գրքերի հեղինակների հետ, հասկացանք մեզ ինչ է պետք քերականությունից, ինչ հատվածներ թարգմանել:

Սփյուռքի ուսուցիչների համար նոր մեթոդներ ու մտահղացումներ ձևավորելը շատ դժվար է, որովհետև հայրենիքից որևէ օգնություն չկա: Այդ առումով այս դասընթացները շատ օգ-

➤3

# Ներկայացնում ենք ախյուռքահայ ուսուցիչներին

➢2 տակար էին և մեզ հուզող շատ հարցերի պատասխանները տվեցին:

Այցելությունները դեպի թանգարաններ և այլուր մեզ օգնեցին, որ կարճ ժամանակահատվածում ճանաչողական և ուսումնական մեծ նյութեր ամբարենք:

Սովորել եմ Գյումրիի համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ինձ համար մեծ ուրախություն էր գտնվել այս շենքում, քանի որ ես միշտ երազել եմ սովորել Երևանում:

**Գայանե Պետրոսյան**

- Վրաստանից եմ: Աշխատում եմ Թբիլիսիի N 103 վրացական դպրոցի հայկական բաժնում: Ավարտել եմ Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի մանկավարժության բաժինը:

Ներկա պահին ինձ մոտ ավարտեցին 16 սովորողներ, այս տարի ընդունելու եմ 1-ին դասարան: Դպրոցը 12-ամյա հանրային դպրոց է: Թբիլիսիում գործում է 2 հայկական դպրոց, մեկը 104 հայկական դպրոցն է, մյուսը 103 դպրոցն է, որտեղ ես աշխատում եմ:

Մեր առաջնային խնդիրն այն է, որ հայ ընտանիքների երեխաները ձգտեն հայկական, ոչ թե վրացական կամ ռուսական կրթություն ստանալ: Կարծում եմ հետզհետե դա կփոխվի, որովհետև մեր դպրոցն անցել է երկլեզու ուսուցման՝, որ երեխաները միաժամանակ և հայերեն սովորեն, և վրացերեն:

Ինչ ստացա այս դասընթացներից. նոր մեթոդներ ուսումնասիրեցի, նոր տեղեկություններ ստացա դասագրքերի մասին, և հույս ունեմ կապը կպահպանվի և նորից հնարավորություն կունենամ մասնակցելու նման դասընթացների:

Տպավորություններս մեծ են, չհասկացա ինչպես անցան դասընթացների 27 օրերը: Ոգևորված եմ, և հետագա կյանքս այստեղ եմ պատկերացնում: Արդեն դիմել եմ մագիստրատուրայի բաժին:

**Խաչատրյան Սեդա**

- Ավարտել եմ Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտը և անմիջապես անցել աշխատանքի: 10 տարի աշխատելուց հետո մեկնել եմ Մոսկվա: 1993 թվականի սեպտեմբերից աշխատել եմ Մոսկվայի հայկական դպրոցում: Աշխատել եմ հայորդյաց տան մեկօրյա դպրոցում, իսկ այժմ աշխատում եմ Մոսկվայի N 23 պետական ռուսական գիմնազիայում: Այդտեղ հայտնվելու հիմնական նպատակս էր ռուսախոս հայ աշակերտներին հայերեն դասավանդել: Շաբաթը երկու անգամ 3 խմբով՝ 7-10, 10-13 և 13-18 տարեկան ռուսախոս երեխաներին պարապում եմ հայերեն:

Երրորդ անգամ եմ մասնակցում այս դասընթացներին: Հայրենիքից դուրս գտնվող բոլոր ուսուցիչներիս ակնկալիքները մեծ էին՝ իմանալ ինչ փոփոխություններ, նորություններ կան լեզվի, գրականության, պատմության մեջ, որ վերցնենք և մատուցենք մեր ռուսախոս հայ ուսանողներին: Որոշակի ծաղկաքաղ արեցինք՝ մեր ուսանողներին մատուցելու համար: Նրանք սիրով ընդունում են, կարողանում են ճիշտ գրել և կարդալ, հաղորդակցվել իրար հետ:

**Մանուշակ Հովսեփյան**

- Իրաքահայ եմ, բայց եկել եմ Հնդկաստանից, ուր արդեն 40 տարի ապրում եմ: Այնտեղ շատ հայեր են բնակվում, կան խառը ամուսնություններով ընտանիքներ: Հայ ընտանիքներն ինձնից շատ հեռու են, ամենամոտը 5 ժամվա հեռավորության վրա է: Այնպես որ մենք չենք կարող դպրոց բացել և երեխաներին հավաքել:

Ես Փենջափից եմ: Կալկաթայում ունենք դպրոց մինչև 10-րդ դասարան:

Ես առցանց Հայոց դպրոց եմ բացել, որպես տնօրեն կազմակերպել եմ, հավաքագրել երեխաների, որպեսզի հայերեն սովորեցնենք, գրել-կարդալ, ազգային պատմություն: Ծնողները չեն առարկում, ընդհակառակը, ուրախ են: Տարբեր տարիքի և մակարդակի երեխաներ են ուսանում մեզ մոտ, մի մասը կարողանում հայերեն խոսել, մի մասը՝ ոչ: Նույնիսկ 30-35 տարեկան հնդիկներ կան, որ ուզում են հայերեն սովորել:

Հայ ծնողները զբաղված են բիզնեսով և երեխաներին հայերեն սովորեցնելու ժամանակ չունեն:

Շաբաթվա մեջ անվճար դասընթացներ ենք կազմակերպում. ես ուխտել եմ՝ իմ հայերեն լեզուն չեմ վաճառի: Միայն կիրակի օրերին փորձում ենք սովորեցնել պար, հայկական պատմություն:

Ամուսինս հնդիկ էր, մահացավ, ունեմ մեկ տղա և մեկ աղջիկ, երկուսն էլ հայերեն են խոսում, հիմա թոռնիկներիս էլ ենք հայերեն սովորեցնում:

20 տարի Հնդկաստանի դպրոցների մանկապարտեզներում հնդկերենով և անգլերենով ուսուցանել եմ: Երբ արդեն համացանցը եղավ՝ 60 ընտանիքի համար խումբ եմ ստեղծել: Առցանց մեթոդը փոքրիկների համար շատ ավելի դժվար է, բայց ես փորձում եմ 4-5 տարեկան երեխաների հետ աշխատել:

Այստեղ մեր փորձառու պրոֆեսորները նոր մեթոդներով մեզ սովորեցրին: Կարծում եմ ժամանակը քիչ էր: Բայց շնորհակալ եմ, որ մեզ համար classroom ստեղծեցին, որ այն, ինչ չհասցրինք, հետագայում սովորենք:

**Սոնա Փարսադանյան**

-Արդեն 25 տարի ապրում եմ ՌԴ-ի Կուրգան քաղաքում: 20 տարի է՝ ինչ մեր քաղաքի պետական երաժշտական դպրոցում բացել ենք հայկական մշակույթի կենտրոն, որտեղ ես առաջին օրվանից դասավանդում եմ հայոց լեզու և գրականություն:

Ունենք նաև պարի խմբակ, որի ուսուցչուհին ռուս է, բայց երեխաները հաճույքով են մասնակցում: Հավելեմ, որ ունենք պատմության ուսուցչի կարիք:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցում եմ արդեն 4-րդ անգամ: Հիացած եմ և տպավորված: Ավարտել եմ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի դասվարական բաժինը: Երկու տարի աշխատել եմ Երևանում: Շատ եմ սիրում իմ աշխատանքը, շատ կարևորում եմ սփյուռքում մեր դպրոցների գործունեությունը, որովհետև մեր առաջին խնդիրը ոչ թե գրագետ, հայախոս կամ հայ մտածելակերպ ունեցող մարդ կրթելն է, այլ հային հայ պահելը, հայկական ոգին նրանց փոխանցելը, հայկական դաստիարակությունը, կրթությունը, միջավայրը ապահովելը:

Այստեղ վերապատրաստվող ուսուցիչները գրեթե նույն խնդիրներին են բախվում իրենց աշխատանքի ընթացքում, և սա լավ հնարավորություն է՝ նաև գիտելիքներն ու փորձը ուսուցիչներով իրար փոխանցելու: Արդեն մի քանի տարի է, ինչ դասավանդողների մեջ ներառված են նաև սփյուռքում դասավանդող ուսուցիչներ, ինչպես Կարինե Եսայանը: Նա ստեղծել է դասագրքեր ռուսախոս աշակերտների համար, որովհետև բավականին դժվար է հայերենը որպես օտար լեզու սովորեցնելը, իսկ դասագրքերը նոր-նոր են ստեղծվում:

**Նազելի Ապայան-Նալբանդյան**

- Ես Բեյրութից եմ, լիբանահայ:

Ծնվել եմ Երևանում, բայց փոքր տարիքից տեղափոխվել եմ Լիբանան, այնտեղ մեծացել, վարժարան հաճախել:

Ես հայագիտությունն եմ ընտրել, միաժամանակ գրաֆիկ-դիզայներ եմ: Երկար տարիներ որպես լրագրող աշխատել եմ տարբեր թերթերում, ապա արաբական հեռուստակայանում որպես հայերեն լրատվականի հաղորդավար, «Ռադիո Սևան»-ի քաղաքական լուրերի մեկնաբան:

Կրթության ասպարեզում առաջին փորձս փոքր-ինչ համեստ էր. հայերեն չիմացող հայերին, նույնիսկ ոչ հայ տեղացիներին, չափահաս մեծահասակներին կարճ ժամանակ հայերեն էի դասավանդում: 3-4 տարի առաջ առաջարկ ստացա Մխիթարյան վարժարանից հայերեն դասավանդելու համար և զգացի, որ պատրաստ եմ թե՛ գիտելիքներով, թե՛ փորձով. լրատվական աշխատանքն էլ դասավանդման նման է. ամեն օր նոր գիտելիքներ ես ստանում:

Մխիթարյան վարժարանը 12-ամյա է, որից հետո մասնագիտական կրթություն են ստանում:

Կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ, որոնք վերաբերում էին ուսուցչական ասպարեզի դիմագրավություններին, հատուկ դասընթացներ ու սեմինարներ, որպեսզի ուսուցիչներն ավելի մշակեն իրենց հմտությունները, գիտելիքները, շփվելու կարողությունները թե՛ աշակերտների, թե՛ ծնողների հետ:

Մանկավարժական համալսարանում հայոց պատմության և մշակույթի խմբի մեջ էի: Առաջին տարին է, որ մասնակցում էի վերապատրաստման դասընթացներին, հետևաբար ինձ համար ամեն ինչ նորություն էր: Հաճելի էր ընկերական միջավայրը, դասախոսական կազմը, նյութերը բավականին ընդարձակ էին, բազմաբնույթ: Վստահ եմ՝ հավելյալ գիտելիքներով ու նորություններով եմ վերադառնալու: Ինձ մնում է դրանք կիրառել:

Մենք ուսուցիչներ ենք, շատ բան արդեն գիտեինք, բայց դասախոսներ էդգար Հովհաննիսյանը, Սամվել Պողոսյանը, Ավետիս Հարությունյանը, Ռուբեն Սաֆրաստյանը, Կամո Վարդանյանը, Արմինե Եփրիկյանը, տիկին Ալվարդը հետաքրքիր նորություններ մատուցեցին: Բրազիլիայից, Ֆրանսիայից, Հնդկաստանից, Ամերիկայից, Ռուսաստանի տարբեր մարզերից եկած ուսուցիչները բոլորն էլ նվիրյալներին, եկել էին նոր մեթոդներ իմանալու և իրենց սաներին դրանք նորովի մատուցելու մղումով ու նախանձախնդրությամբ: Իրար հետ փոխանակեցինք մեր կարիքները: Առանց բացառության, նույնիսկ ռուսաստանաբնակ ուսուցիչները արևելահայերեն դասագրքերի պակաս ունեն, միջոցների, աղբյուրների պակաս ունեն: Ես համոզված եմ՝ տեխնոլոգիաները մեծ միջոցներ ու հնարավորություն են ընձեռում: Ինչ վերաբերում է արևմտահայերենին, պետական հատուկ փորձեր կան, չեմ թերագնահատում, այնուամենայնիվ, դասագրքերը, որոնցով մեզանում ուսուցանում են, անհատական փորձեր են: Դրանց մեջ կան և՛ հաջողվածներ, և՛ անհաջող դասագրքեր, ցավոք, որոնցով դասավանդում են որոշ վարժարաններում:

Մենք այսուհետ կփորձենք պետական, միասնական հարթակներից օգտվել, ինչպես օրինակ, «Աշխարհացույցը», որ հրաշալի հրաբակ է աշակերտների և ուսուցիչների համար, և եթե արևմտահայերենի ուսուցիչներին էլ ընդգրկեն, շատ լավ կլինի:

Ես նկատեցի, որ յուրաքանչյուր ուսուցիչ իր միջոցներով է պատրաստում նյութերը, մինչդեռ համոզված եմ, որ բոլորը պետք է միասնական դաշտում գործեն: Թեև տարբեր երկրներում դրանք տարբեր արդյունավետություն կարող են ունենալ:

Հայաստանում բազմիցս եմ եղել, սակայն այս դասընթացին մասնակցելը շատ հաճելի էր, տպավորությունները՝ խորը, հատկապես այցելությունները հնագիտական վայրեր, որոնք մեզ հարստացրին նոր գիտելիքներով:

**Թամարա Մաթևոսյան**

- Դասավանդում եմ Մոսկվայի Լազարյանների անվան պետական հանրակրթական միջնակարգ դպրոցում: Դպրոցը վաղուց է հիմնադրվել, բայց որպես Լազարյանների անվան, այս տարի մենք նշեցինք 15-ամյակը:

Ավարտել եմ Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետը 1977 թվականին, աշակերտել եմ Առաքել Առաքելյանին, Արարատ Ղարիբյանին, Սուրեն Դանիելյանին, Ալիտա Դոլուխանյանին:

Դպրոցը նորակառույց հոյակապ դպրոց է, ունենք տարբեր ազգությունների շուրջ 780 աշակերտ, և քանի որ դպրոցը կոչվում է արևելյան թեքումով դպրոց, մեզ մոտ դասավանդվում է պարսկերեն, արաբերեն, հայերեն. հայոց լեզուն պարտադիր է բոլոր հայ երեխաների համար, իսկ դպրոցում 450-ից ավելի հայ երեխա կա:

Տնօրենը վաստակաշատ ուսուցչուհի Գայանե Աբրահամյանն է:

«Ուսուցիչը նա չէ, ով սովորեցնում է, այլ նա, ումից սովորում են»:

**Ռիչարդ Բախ**

«Երջանիկ է այն մարդը, որը կյանքում հանդիպել է լուսամիտ ուսուցչի»:

**Մարի Ֆելիսիտե Բրոսսե**

# ԻՍԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ

Ուսուցիչն այն մարդն է, որի կերպարը ուղեկցում է քեզ ողջ կյանքում: Մշտապես հիշում եմ նշանավոր Մարի Ֆելիսիտե Բրոսսեի խոսքերը իր ուսուցչի՝ ֆրանսիական գիտական հայագիտության հիմնադիր Անտուան Ժան Սեն-Մարտենի մասին. «Երջանիկ է այն մարդը, որը կյանքում հանդիպել է լուսամիտ ուսուցչի»:

Բոլորովին վերջերս կարդացի մեծ հայասեր Ֆրիտյոֆ Նանսենի հիմնադրամի տնօրեն, գրող, հրապարակախոս, թարգմանիչ Ֆելիքս Բախչինյանի «Իմ Կոնֆուցիուսը» հուշապատում գիրքը՝ նվիրված Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ պատմալեզվագրական ֆակուլտետի շրջանավարտ, հետագայում նույն բուհի հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Վիգեն Ավագյանին, որը կյանքից վաղ հեռացավ՝ 57 տարեկանում:

Գիրքն ինձ վերադարձրեց ուսանողական տարիներս, մեր բացառիկ ուսումնատեն կուրսը, ուր սովորում էին 25 աղջիկ և 25 տղա: Մեր կուրսից էին երկու մեծատաղանդ բանաստեղծներ Ռազմիկ Դավոյանը և Արմեն Մարտիրոսյանը, որոնք մինչև երրորդ կուրսը գերազանց էին սովորում:

Վիգենը նույնպես գերազանց սովորողներից էր, հետո դարձավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի երկարամյա տնօրեն, ուսանողների սիրելի Արարատ Ղարիբյանի ասպիրանտը:

Ֆելիքս Բախչինյանը Վրաստանին սահմանամերձ Բագրատաշեն գյուղում աշակերտել էր Վիգեն Ավագյանին ու հենց նրանից էլ իմացել էր, թե ով է Քրիստոսի ծնունդից դարեր առաջ ապրած չինացի փիլիսոփան ու մանկավարժը:

Եկեք չմոռանանք, որ աշխարհի ցարդ չգերազանցված երկու փիլիսոփաները՝ Պլատոնն ու Արիստոտելը նույնպես եղել են ուսուցիչներ: Ուսուցիչ էր նաև Ալբերտ Էյնշտեյնը:

Ֆելիքս Բախչինյանը նույնպես մանկավարժական կրթություն է ստացել. ավարտել է այն ժամանակ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, ու Վիգեն Ավագյանն այնտեղ էլ դասախոսել է նրան:

«Իմ Կոնֆուցիուսը» գիրքն ունի մանկավարժական-դաստիարակչական, ճանաչողական ուղղվածություն: Գեղարվեստի լեզվով գրված վավերագրական այդ գրքի գործողությունները պտտվում են Ֆելիքս աշակերտի, ուսանողի և Վիգեն Ավագյան ուսուցչի ու դասախոսի անձերի շուրջ:

Իրավացիորեն Բախչինյանը շեշտում է. «Հայերս կրթամոլ ազգ ենք բառիս ամենաազնիվ իմաստով, և կրթությունը միանգամայն այլ խորհուրդ ունի հայ մարդու գոյության ճանապարհին» (էջ 17): Այս ճշմարտությունը հաճախ են հիմնավորում նաև օտարազգի հայագետները: Նիկողայոս Մառը, օրինակ, բազմիցս նշում է, թե հայերը շատ դարեր չունենալով պետականություն, վանական դպրոցների շնորհիվ քայլում էին առաջավոր աշխարհին համընթաց:

Վիգեն Ավագյանը հիանալի տիրապետում էր արդի հայերենի գիտական համակարգին, և նրա դպրոցական դասագրքերը գրված էին հստակ, հասկանալի, ինքնուրույն: Նա դեռ ուսանողական տարիներին ընդվզում էր տգիտության դեմ և շատ էր աշխատում:

Նա աշակերտների մեջ արթնացրել է սեր դեպի գրականությունն ու գիտությունը, ստիպել է, որ նրանց տրամաբանությունը զարգանա և կարողանան գրական երկն ինքնուրույն վերլուծել:

Բախչինյանը հիշում է, թե իր Կոնֆուցիուսը ինչպես էր բացատրում Գրիգոր Նարեկացու վաղ Վերածննդի ներկայացուցիչ լինելը ու հիշեցնում էր, թե Աստված կա ամեն մարդու մեջ, դա նրա խիղճն է:

Ֆելիքսը հայոց ցեղասպանության մասին էլ առաջին անգամ լսել է իր ուսուցչից: Լևոն Շանթի, Կոստան Զարյանի, Շահան Շահնուրի մասին էլ առաջին անգամ լսել է իր ուսուցչից, որովհետև այդ հեղինակները չեն եղել դպրոցական ծրագրում: Իհարկե, Ֆելիքս Բախչինյանն իր դեպի գրականությունն ունեցած բնատուր ձիրքով եղել է Վիգեն Ավագյանի սիրելի աշակերտը, և մի առիթով վերջինս ասել է. «Երանի էն տանիքին, որի տակ Ֆելիքսն է ապրում»: (էջ 42)

Բախչինյանն ազնվորեն քննադատում է նաև Կիրովականի մանկավարժական ինստիտուտում իր սովորելու տարիներին եղած որոշ արատավոր երևույթներ, որոնք խորթ էին թե իր և թե Բագրատաշենի դպրոցի իր Կոնֆուցիուսի համար:

«Իմ Կոնֆուցիուսը» գիրքն ունի մանկավարժական որոշակի ուղղվածություն ու ցանկալի է, որ այն կարդան շատերը: Գիրքը մի հիանալի հուշարձան է՝ նվիրված ազնիվ, տաղանդավոր մանկավարժ-լեզվաբան Վիգեն Ավագյանի հիշատակին:




***ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ***

# ՈՒՍՈՒՑՉԻՆ ՄԵԾԱՐԵԼՈՒ ՊԱՏԻՎԸ



Տա Աստված, որ նրանք աշխարհին բաժանած իրենց բարությանը կարոտ չմնան:

Սեպտեմբեր 1-ից զատ ուրիշ ավելի կատարյալ տոն, իմ կարծիքով, չկա ուսուցչի համար...

Այսօր բոլոր ծաղիկները տարվում են մեն մի հասցեով, որի դռանը մեծ, գունազարդ տառերով գրված է՝ ՈՒՍՈՒՑԻՉ: Բացում ես այդ կախարդական դուռը, և ներսում՝ ժպիտ, բարություն, նվիրում, սեր, շա՜տ սեր…

Ոտքերիդ փոշին մաքրիր, նոր մտիր, խաղաղ, ջերմ հայացքով նայիր ներսում քեզ ժպտացողին՝ նրա այդ ժպիտի մեջ այնքա՜ն շատ է բարությունը, քնքշանքը, գորովն ու սերը:

Դու էլ ժպտա ծաղիկները նրան մեկնելիս, նայիր, թե նա ինչպես է ընդունում դրանք - նախ գեղեցիկ ժեստով իր նույնքան գեղեցիկ գլուխը շատ թեթևակի կխոնարհի (դա քեզ համար աստվածային պարգև է), հետո ծաղիկներն անպայման դեմքին կմոտեցնի.

-Օօօ, ի՜նչ անուշ են բուրում,-ու նոր քեզ կմեկնի ձեռքը՝ նաև ա՛յդ կերպ շնորհակալությունը հայտնելու: Ուշադիր նայիր, թե ինչ դիրքով է քեզ մեկնած այդ նուրբ ձեռքը. եթե ափը ներքև է, ուրեմն դու պիտի համբուրես այդ սուրբ ձեռքը (դա քեզ համար աստվածային երկրորդ պարգևն է):

Գիտեմ, հիմա աշխարհով մեկ եղար, որ գոհացրիր ՈՒՍՈՒՑՉԻՆ, որ քո մի ափ սրտի մեջ ու քո հոգու մեջ մի ջերմ զգացում խլրտաց՝ դու ՈՒՍՈՒՑՉԻՆ մեծարելու պատիվն ունեցար:

Հիմա արդեն կարող ես ասել.

-Շնորհավոր Ձեր տոնը, իմ կյանքի ուղեկից, իմ սլացքի ուղին օրհնաբարող, ինձ միտք ու իմ թռիչքին թևեր տվող առաքյալ…

Սեպտեմբեր 1-ից զատ ուրիշ ավելի կատարյալ տոն, իմ կարծիքով, չկա ուսուցչի համար: Ինչպես է պատրաստվո՜ւմ նա այդ օրվան-ինչպես հարսանիքի օրը հարսին են հագցնում, զարդարում, այդպես էլ, իմ կարծիքով, ուսուցիչն է այդ օրը զարդարվում, կոկում իրեն՝ նա այդ օրը պիտի անկրկնելի կրկնությունների մեջ նորովի՜ երևա…

Ուսուցիչն այդ օրը, որքան էլ փորձառու՝ ներքին ապրումներ ունի, որ ոչ վախ է, ոչ անհանգստություն, ոչ, մանավանդ, տագնապ՝ դա ԿԱՐԳԻՆ մարդու սովորական պահվածք է, որովհետև այդ ԿԱՐԳԻՆ մարդը քննություն տվողի հոգեբանությամբ է մոտենում այդ օրվա ամե՛ն իրադարձության՝ դպրոցի մուտքին հավաքված աշակերտների միջով հպա՛րտ կեցվածքով անցնելու, աջ ու ձախ ժպիտ պարգևելու և ժպիտներ ստանալու դժվարին քննությանը պատրաստ:

Իմ պատկերացումների մեջ հենց այսպիսի՛ն է ուսուցիչը, և ակնածանքը նրա հանդեպ գալիս է իր անցած տարիների վաստակի՛ հանգույն:

Տա Աստված, որ նրանք աշխարհին բաժանած իրենց բարությանը ԿԱՐՈՏ ՉՄՆԱՆ:

…Շնորհավոր իմ ծանոթ, իմ ընկեր բոլոր, բոլոր ուսուցիչներին: Եվ՝ կարոտս մեր գյուղի դպրոցի ուսուցիչներին այս հողի վրա ու…Երկնքում:

**Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ.**
**ՀՊՄՀ շրջանավարտ**

# Լավագույն ուսանողները հանգստացան Վրաստանում

Արդեն 12-րդ անգամ ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ անցկացված «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության լավագույնները երեք օրով ուղևորվեցին Վրաստան, որտեղ էլ հանգստացան և ծանոթացան վրացական մշակույթին, այցելեցին պատմամշակութային վայրեր՝ Սվետիցխովելի եկեղեցի, Բոդբե մենաստան, որտեղ ամփոփված է Սուրբ Նինոյի մարմինը, Սոլոլակի թաղամաս՝ Թումանյանի տուն-թանգարան, հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոն, զբոսնեցին կոլորիտային Թբիլիսիում, մասնակցեցին նավարկության, երթևեկեցին ճոպանուղով:

Ուսանողները նաև եղան Վրաստանի հնագույն մայրաքաղաք Մցխեթայում, այցելեցին Ջվարիի տաճար, Կախեթիի մարզ, ուղևորվեցին Սիղնախի սիրո քաղաք:

Համալսարանի ուսանողները վառ ու անմոռանալի տպավորություններով վերադարձան Վրաստանից:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանն վստահեցրեց՝ «Լավագույն ուսանող» մրցույթը շարունակական կլինի, քանզի այն խթանում է ուսանողների բարձր առաջադիմությունը, բարձրացնում նրանց գիտական ու հասարակական ակտիվությունը:

Ուսանողական կառույցի ղեկավարը շնորհակալություն հայտնեց շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանի ղեկավարությանը՝ ուսանողական նախաձեռնություններին մշտապես աջակցելու և խրախուսելու համար:

**Մեր հարցազրույցը ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ահդա ԹՈՓՈՒԶՅԱՆԻ ՀԵՏ**

# ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ՑԱՆԿԱՑԱԾ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿ,-

## ԱՍՈՒՄ Է ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՀԴԱ ԹՈՓՈՒԶՅԱՆԸ

**- Տիկին Թոփուզյան, որո՞նք են մանկավարժության ոլորտի այսօրվա ամենաառաջնային հիմնախնդիրները:**

-Խնդիրները շատ են, բայց փորձեմ թվել ամենակարևորները մեր համալսարանի համար: Հավատարմագրումից հետո առաջին խնդիրն այն է, որ մենք պետք է վերանայենք մեր մասնագիտական կրթական ծրագրերը. դրանք պետք է լինեն ինտեգրված ծրագրերը, և մենք պիտի կարողանանք օգնել ուսանողին՝ իր գիտելիքները բոլոր առարկաների գծով օգտագործել: Դրա համար անհրաժեշտ են նաև ինտեգրված ծրագրեր: Մենք պետք է կարողանանք կրթությանը նորովի վերաբերվել այն իմաստով, որ այն կիրառական նշանակություն ունենա, և մենք պիտի կարողանանք այնպես դասավանդել, որ մեր ուսանողը կարողանա իր տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկայում:

Շատ կարևոր է նաև համագործակցային աշխատանքը՝ համագործակցություն ուսուցչի և աշակերտի, ուսանողի և դասախոսի միջև:

Ժամանակակից մանկավարժությունը պահանջում է միասին գիտելիք ստեղծել, որի համար համագործակցել և հաղորդակցվել է պետք: Այս իմաստով մենք պետք է մեր ծրագրերում օգտագործենք ուսանող-դասախոս համագործակցությանը աջակցող ծրագրեր, որոնք նպաստում են դասախոս-դասախոս, դասախոս-ուսանող, ուսանող-ուսանող հաղորդակցմանը:

Այսօր հնարավորություն պետք է տալ ուսանողին և այնպիսի մթնոլորտ ստեղծել բարձրագույն ուսումնական հաստատությունում, որ ուսանողը հնարավորություն ունենա ներդրում ունենալ իր մասնագիտության մեջ: Դա այսօր շատ կարևոր է, որովհետև այսօր աշխարհը գնում է դրան: Մենք նույնիսկ ուսուցիչներ ունենք, որոնք պատրաստ չեն որևէ ներդրում անել իրենց մասնագիտության մեջ, իսկ այսօր մենք պետք է պահանջենք մեզնից ու մեր բոլոր կոլեգաներից, որ ուսանողը դեռևս ուսանողական տարիներից ներդրում ունենա իր մասնագիտության մեջ:

Այսօրվա ուսանողը պետք է պատրաստ լինի նաև կամավորական աշխատանք անելու, ինչը նույնպես կարևոր է: Նա պետք է մասնակցային անձ լինի:

Այս բոլորը կապված են իրար հետ: Նա պետք է իմանա՝ ինչ է կատարվում այն մասնագիտության մեջ, որն ինքն ընտրել է, պետք է կարողանա կարդալ ու հասկանալ բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են իր մասնագիտությանը և կրթական քաղաքականությունն են ձևավորում, պետք է սեփական կարծիք ունենա այդ բոլորի մասին և հասկանա ինչը փոխել՝ իր մասնագիտությունն ավելի ժամանակակից ու կիրառական դարձնելու համար:

**-Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի մերօրյա ուսուցչի օրինակելի կերպարը: Միայն նվիրումով կարելի՞ է լավ ուսուցիչ լինել:**

-Գիտե՞ք, նվիրյալ լինելը շատ կարևոր բաղադրիչ է ուսուցչի առաքելության մեջ: Այսօրվա ուսուցիչը նաև պետք է գիտակցի, որ մեր երկրի ապագայի համար է աշխատում և մեր երկրի ապագան է կերտում: Այս բոլորը բարոյական արժեքներ են, և ուսուցիչը պետք է կրողը լինի այդ արժեքների: Բայց շատ կարևոր է, որ լավ ուսուցիչը լավ վարձատրվի:

Իմ կարծիքով, լավ ուսուցիչ լինելու համար, բացի նրանից, որ ուսանողը կամ աշակերտը գիտակցաբար եկած լինի մեր ոլորտ, այսօրվա կրթության պահանջներին համահունչ քայլի: Այդ իմաստով, մեր ուսուցիչները թվայնացման հետ կապված խնդիրներ ունեն: Որովհետև այսօր երեխաները շատ ավելի հեշտությամբ են այդ դաշտում աշխատում, քան ուսուցիչները: Ուրեմն մենք նույնպես՝ մանկավարժական կադրեր պատրաստող բուհերս, պետք է մտածենք թվային համալսարան դառնալու մասին, որ մեր ծրագրերում օգտագործենք թվայնացման առանձնահատկությունները և սովորեցնենք մեր ուսանողներին, որ յուրաքանչյուրն իր առարկայի դասավանդման ընթացքում կարողանա կիրառել դրանք:

Ես կուզեի վերջապես հասկանանք, որ այլևս մենք մենք չենք գիտելիքի հիմնական աղբյուրը, դասախոսը և ուսուցիչը պետք է լինեն ուսանողի, աշակերտի հետ միասին գիտելիք ստեղծող, որ կարողանանք գիտակցել՝ որ որոշ բաներ էլ մենք կարող ենք աշակերտից սովորել, և դա նորմալ է: Այսօր մենք հենց դա ենք քարոզում, որ համագործակցենք և միմյանցից սովորենք, սովորեցնենք այդ առարկայի դասավանդման մեջ ինչպես կարող է օգտագործել թվայնացման տեխնոլոգիաները:

**-Ի՞նչ չի կարողանում այսօր հաղթահարել ուսուցիչը:**

-Հաղթահարելու շատ բան կա այն իմաստով, որ այն կարևոր փաստաթղթերը, որ պետք են ուսուցչին, կան. կրթության կարգավորող օրենքները կան, հեռավոր 90-ական թվականները չեն, մենք պետք է մեր աշխատանքում արագ տեսնենք այդ փոփոխությունները, զգանք, կարողանանք արագ հարմարվել դրանց: Այսօր ուսուցիչը չի կարողանում հաղթահարել, օրինակ, այն, որ ինքը կանխատեսել պիտի կարողանա, երեխային սովորեցնի ճիշտ նպատակներ դնել, որ պետք է կարողանա ռեֆլեքսիա անել և այն դարձնել իր անձնական որակը, որովհետև եթե մենք ամեն օր մեր աշխատանքը չվերլուծենք, հետադարձ կապ չստեղծենք, մեր աշխատանքը անարդյունավետ կդառնա:

**-Ի՞նչ եք կարծում, մեր համալսարանի շրջանավարտները որակական ի՞նչ պատրաստվածությամբ են մտնում դպրոց:**

-Դա շատ դժվար հարց է, որովհետև մեր բոլոր շրջանավարտները նույն մակարդակի վրա չեն: Մենք մեր շրջանավարտների համար ստեղծում ենք այնպիսի միջավայր, որտեղ հնարավոր կլինի սեփական կարծիք ունենալ, հաղորդակցվել, սոցիալականացվել, և դրա համար բոլոր հնարավորությունները մեր համալսարանում կան: Մենք սովորեցնում ենք և՛ ռեֆլեքսիա անել, և՛ կանխատեսել: Դուք կարող եք մտածել՝ հիմա դա բոլորը կարողանում են անել. դա այդպես չի: Բայց գոնե մեր շրջանավարտը գիտի, որ դրանք կարևոր բաներ են, ուսուցչի կոմպետենցիաներ են: Եվ ինքը պրակտիկայից ելնելով, այն, ինչ սովորել է տեսականորեն, ավելի հեշտությամբ պրակտիկայում կօգտագործի: Մեր շրջանավարտը կարող է խոսել, պատմել իր մասնագիտության մասին, ելույթ ունենալ, քարոզել ծնողներին, երիտասարդ ուսուցիչներին՝ ով է երեխան, ինչպես վարվել երեխայի հետ:

Մեր ուսանողը գիտի հետազոտություն անել, ես չեմ ասում խոր, բազմակողմանի, բայց, այնուամենայնիվ, իր ավարտական թեզի համար նա կարողանում է թեմայից ելնելով հարցաթերթիկ կազմել և հետազոտություն իրականացնել: Այսօր սրանք շատ կարևոր բաներ են, որովհետև ուսուցիչը պետք է լինի ոչ միայն դասավանդող, այլև հետազոտող: Ավելին, մեր ուսանողներն իրենց թեզերի ղեկավարների հետ միասին հանդես են գալիս ուսանող-դասախոս համատեղ կոնֆերանսում և քննարկման են դնում իրենց հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները՝ դրանով իսկ նպաստելով իրենց մասնագիտության մեջ ներդրում անելուն:

Մեր ուսանողը կարող է կարդալ կրթական քաղաքականությանը վերաբերող ցանկացած փաստաթուղթ, մասնակցել դրա քննարկմանը և կարծիք հայտնել այդ մասին: Մեր ուսանողը ծանոթ է ուսուցման մեթոդներին, կարող է մշակել և մոդելավորել իր դասավանդած առարկային վերաբերող դասեր, գործնական աշխատանքներ և այլն:

**-Ի՞նչ կմաղթենք նոր ուսումնական տարվա առթիվ ոլորտի աշխատողներին, ուսանողներին ու աշակերտական համայնքին:**

-Մեր աշխատանքը սիրում է միշտ առաջ նայել, հետ չգնալ, իսկ եթե հետ նայել, ապա եղածը գնահատել, աշխատել այն ավելի կատարելագործել, բայց երբեք հետ չմնալ: Ուսանողը հիմա ավելի շատ ժամանակ ունի սովորելու, ինքնակրթվելու, բայց որքան մեծանա և աշխատանքի ոլորտը ընդլայնվի՝ ավելի քիչ ժամանակ կունենա իրենով զբաղվելու: Դրա համար ինքնակրթության պահանջը մեր մեջ պիտի լինի, այն պիտի վերածի իսկապես անձնային որակի: Եվ մենք չենք կարող առանց մեր աշխատանքը մշտապես վերլուծելու և վերանայելու հաջողության հասնել:

**Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ**

# Մեր շրջանավարտները. Լիլիթ Լալիկի Խաչատրյան



Լիլիթ Խաչատրյանը ծնվել է 1974 թվականին Կամո քաղաքում (այժմ՝ Գավառ): 1990-1995 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1995-1998 թթ. սովորել է նաև բուհի ասպիրանտուրայում, 1999-ին պաշտպանել է թեկնածուական՝ նվիրված Ղևոնդ Վարդապետի «Պատմություն» երկի լեզվի քննությանը և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1997-2002 թթ. որպես գրաբարի դասախոս՝ աշխատել է ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

2002 թվականից բնակվում է Ամերիկայում: Աշխատում է Լոս Անջելեսի Համազգային Արևմտյան շրջանի գրական միավորումում որպես գրաբարի դասախոս:

2022-ին հրատարակել է «Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի լեզուն» մենագրությունը:

Տասնյակից ավելի հոդվածներ է հրատարակել ՀՀ գիտական պարբերականներում:

Լիլիթ Խաչատրյանի «Կարոտի բույրը» գրքի պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Մակարյանը:

«Ժողովածուն ներառում է բանաստեղծություններ, արձակ բանաստեղծություններ, քնարական մտորումներ, արձակ էջեր, էտյուդներ և զանազան ուրվապատկերներ, որտեղ անուրջը դառնում է իրականություն, իսկ պոեզիան կամ արձակը հայտնվում են իրականության և պատրանքի միջև:

Ժողովածուն աչքի է ընկնում հեղինակի փիլիսոփայական և գոյաբանական խոհերով, որտեղ առաջին պլան են մղվում ներհայեցումն ու մտազննումը»,-գրում է պրոֆեսոր Ալբերտ Մակարյանը:

### Դու

Դու շոշափել ես ժամանակը ու մնացել ես նրա ծալքերում...

Դու բառն ես, որով ծնվում է միտքը, մեղեդին, որով սնվում է սիրտը,

Սրտի թրթիռն ես, կյանքի ակունքը:

Դու հաց ես, ջուր ես, համն ես, որից ցնծում է քիմքը:

Ե՛տ նայիր, նայի՛ր երաշտի թողած մերկ այս ճյուղերին՝ խե՛ղճ այս թևերին...

Ուսուցչի իմ օրինակը

# Ուսուցիչ լինելը մտածելակերպ է ու կենսակերպ



Շատ փոքր էի, սիրում էի «դպրոց-դպրոց» խաղալ: Դեմքիս մեծական արտահայտություն էի տալիս, ձայնիս երանգը փոխում, ուզում էի ինչ-որ բան սովորեցնել մեր բակի երեխաներին... Գիտակցաբար թե անգիտակցաբար ուզում էի ուսուցիչ դառնալ, քնում-արթնանում էի այդ երազանքով:

Հետո ավարտեցի դպրոցը, իմ սիրելի ուսուցիչների կերպարները հոգուս մեջ դաջված՝ առանց երկար-բարակ մտածելու դիմեցի մանկավարժական. գնացի իմ երազանքի հետևից:

Ուսանողական տարիները հագեցած էին. հարազատ բուհն ինձ համար նոր ու հետաքրքիր էջեր հյուսեց: Ամեն ինչ ոգևորիչ էր՝ մեծ քաղաքի աղմուկը, ուսանողական կյանքը, բուհի եռուզեռը: Ինձ ուսուցանում էին այն դասախոսները, որոնք դեռ դպրոցական տարիներից ոգևորել էին ինձ: Գիտնականները, որոնք գրել էին իմ դպրոցական դասագրքերը, իմ կողքին էին. ունկնդրում էի նրանց դասախոսությունները, խորանում հայոց լեզվի և գրականության անհուն ծիրում, անհագ կարդում, հետազոտում, հասունանում:

Ավելի ու ավելի համոզվեցի, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել: Բուհն ինձ թևեր տվեց, և ես սովորեցի ճախրել: Ավարտեցի, աշխատանքի անցա դպրոցում, շփոթված, հուզված վարեցի իմ առաջին դասը, հետո երկրորդը, երրորդը... Սովորեցի ու սովորեցրի: Երբեք չեմ մոռանա իմ աշխատանքային առաջին օրերի շփոթմունքն ու աստիճանաբար ձեռք բերված ինքնավստահությունը, աշակերտներիս հետաքրքրասեր հայացքներն ու այդ հետաքրքրությունը վառ պահելու պատրաստ իմ պրպտումները:

Հետո տարիներ անցան, փորձառություն ձեռք բերեցի: Գրականության ուսուցիչը մեծ ու կարևոր առաքելություն ունի. հայրենասիրություն, աշխարհայացք ու արժեհամակարգ է ձևավորում, գրական ճաշակ է սերմանում, գեղեցիկ խոսք ուսուցանում: Իմ աշխատանքային կենսագրության ընթացքում միշտ փորձել եմ գրական հերոսների ճակատագրով ապրեցնել աշակերտներիս, նրանց հաղորդակից դարձնել գրողի մտորումներին, ուղղորդել, որպեսզի ինքնուրույն մտածեն, դատեն ու քննեն դեպքերն ու արարքները:

Հայոց լեզվի և գրականության ուսուցչի իմ կյանքը երբևէ չեմ պատկերացնում առանց դպրոցի շնչառության, աղմկոտ, բաբախուն հևքի: Տարիների հետ ավելի ու ավելի եմ համոզվում՝ ուսուցիչը նա է, ում շնորհիվ գունավոր ու պայծառ է մանկությունից եկող աշխարհը, ով լուսավորում է մարդու ճանապարհներն ամբողջ կյանքի ընթացքում: Ուսուցիչն է ստեղծում այն դրախտավայր-աշխարհը, որտեղ ամեն ինչ մանկության անարատ գույներով է պայծառ, որտեղ ամեն գրված բառ խորախորհուրդ իմաստներով է լեցուն, որտեղ ամեն գիրք մի զարմանահրաշ աշխարհի փեղկեր է բացում, ամեն մի պատկեր բազմաթիվ ուղղություններով է արտացոլվում, ամեն մի անկյուն իր բազմաչափությունն է գծում, և ամեն բույս, ծառ ու ծաղիկ իր հեքիաթն է պատմում:

Ես երբեք չհեռացա իմ մանկավարժականից. հպարտ եմ, որ աբովյանական եմ իմ սիրելի բուհի մի մասնիկը, նրա հոգևոր արժեքների, անշիջելի լույսի կրողը, նրա վառած կանթեղի մի թրթիռը: Ուսուցիչ լինելը մտածելակերպ է ու կենսակերպ: Իմ սիրելի բուհի ոգեղեն միջավայրում եմ հասկացել, որ ուսուցիչն արվեստագետ է, ուսուցչի մասնագիտությունը՝ արվեստներից ամենաազնիվն ու առաքինին:

***Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Խ. Աբովյանի անվան N 1 ավագ դպրոցի***
***հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի***

# «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաների ամառային արձակուրդները Երևանում

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաներից շատերն այս ամառ իրենց արձակուրդներն անցկացրին մայր հայրենիքում: Նրանք հնարավորություն ունեցան ծանոթանալու բազմաթիվ պատմամշակութային վայրերին, որոնց մասին բազմիցս խոսվել, պատմվել և ցուցադրվել էր հայրենագիտության դասընթացների ժամանակ:

Դպրոցի սաները տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի և ծնողների հետ այցելեցին տարբեր թանգարաններ: Մասնավորապես հայ ականավոր գրող, մանկավարժ, լուսավորական, արևելահայ աշխարհաբար գրականության հիմնադիր Խ. Աբովյանի 215-ամյակին ընդառաջ նրանք այցելեցին գրողի տուն-թանգարանը, իմացան նաև, որ նրա անունով է կոչվել Հայկական պետական մանկավարժական համալսարանը Երևանում, մայրաքաղաքի երկու դպրոց, ինչպես նաև ամենագեղեցիկ, երևանցիների ամենասիրելի փողոցներից մեկը:

Տնօրեն Արևիկ Ստամբոլցյանը սիրով դիմավորեց դպրոցի սաներին և ծնողներին: Այնուհետև տեղի ունեցավ հանդիպում Շողիկ Փահլևանյանի հետ, որի ընթացքում քննարկվեցին հետագա կրթամշակութային համագործակցության ուրվագծերը:

Նշենք, որ Խ. Աբովյանի տուն-թանգարանն իր գործունեությունը սկսել է 1938 թվականից, իսկ թանգարանի ժամանակակից շենքը բացվել է 1978 թվականին (ճարտարապետ՝ Լիպարիտ Սադոյան, նախագծող՝ Հայաստանի վաստակավոր ինժեներ Իլյա Մանուչարյան): Հավելենք, որ հայ նոր գրականության և նոր գրական լեզվի հիմնադիր Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում պահվում են նրա անձնական իրերի, ձեռագրերի, գրքերի և պարբերականների հազվագյուտ հավաքածուները:

Թանգարանի դիմաց կանգնեցված է ականավոր հայրենակցի բրոնզե գեղեցիկ հուշարձանը (ստեղծվել է Փարիզում 1913 թվականին, ճարտարապետ՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ և վաստակավոր ճարտարապետ Մարկ Գրիգորյան, քանդակագործ՝ Անդրեաս Տեր-Մարուքյան):

Հետաքրքիր ծանոթություն էր սպասվում նաև Հովհաննես Շարամբեյանի անվան Ժողովրդական արվեստի թանգարանում (տնօրեն՝ Լուսինե Թորոյան), որտեղ աշակերտներն ականատես եղան մեր նախնիների ձեռագործ աշխատանքներին՝ գորգագործություն, փայտագործություն, խեցեգործություն, ասեղնագործություն, տարազներ և այլն: Նման այցելությունները միտված են ապահովելու «Վերածնունդ» դպրոցի հայրենագիտության դասընթացի գործնական մասը:

«Վերածնունդ» դպրոցի սաներն ու ծնողներն այցելեցին նաև Հայաստանում 104 տարի լույս տեսնող «Հայաստան» պարբերականի խմբագրություն: Հատկապես արժեքավոր է, որ այս միջոցառման ընթացքում տեղի ունեցավ հանդիպում անվանի գրող, հրապարակախոս, «Հայաստան» թերթ-ամսագրի գլխավոր խմբագիր Տիգրան Նիկողոսյանի հետ, ով ավելի քան 25 տարի ղեկավարում է վերոնշյալ հրատարակությունը: Ի դեպ, պարոն Նիկողոսյանը, ով Հայաստանի ժուռնալիստների միության և Հայաստանի գրողների միության, ինչպես նաև Գրողների, լրագրողների և ծովային նկարիչների միջազգային ասոցիացիայի անդամ է, հրատարակել է շուրջ 40 գիրք: Հավելենք, որ հետաքրքիր միջոցառմանը մասնակցել է նաև լրագրող Մարիամ Միրզոյանը:

Այսպիսով, Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի աշակերտները, նրանց ծնողները հաղորդակից եղան իրենց արմատներին, մանրամասն ծանոթացան իրենց նախնիների պատմությանը, թողած բարձրարժեք ժառանգությանը, որը կնպաստի հայրենաճանաչության և հայապահպանության կարևոր գործընթացին:

***ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից***
***Մոսկվայի «Վերածնունդ» հայկական***
***կիրակնօրյա դպրոց***

## Անատոլի ՍԱՀԱԿՅԱՆ

Կյանքի 78-րդ տարում իր մահկանացուն կնքեց Մանկավարժական համալսարանի նախկին պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Անատոլի Սահակյանը:

Անատոլի Սահակյանը ծնվել է 1946 թվականին՝ Ապարանի շրջանի Շենավան գյուղում: 1971 թվականին ավարտել է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի Պատմության ֆակուլտետը: 1965 թվականից աշխատել է Մանկավարժական համալսարանում, տասնամյակներ շարունակ հաջողությամբ զբաղեցրել տարբեր պաշտոններ՝ համատեղելով դասախոսական աշխատանքի հետ:

2000-2010 թթ. զբաղեցրել է ՀՊՄՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը: Նա մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ էր, մի շարք գիտական և մեթոդական աշխատանքների հեղինակ:

Անատոլի Սահակյանը մշտապես գործընկերների կողքին էր, աշխատանքային գործընթացում օգնում էր նրանց հաղթահարելու դժվարությունները՝ ոչ միայն որպես ղեկավար պաշտոնյա, այլև բարեկամ, մարդկային հարաբերություններում նա աչքի էր ընկնում անկեղծ ու պարզ իր տեսակով:

Մանկավարժական համալսարանի ղեկավարությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը խորապես ցավակցում են Անատոլի Սահակյանի ընտանիքին և մտերիմներին՝ վաստակաշատ մանկավարժի մահվան կապակցությամբ: Նրա հիշատակը վառ կմնա գործընկերների և ուսանողների սրտերում:

## Հայկունի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոր վշտով տեղեկացնում ենք, որ կյանքից հեռացել է Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, պրոֆեսոր-խորհրդատու ֆիզմաթ գիտությունների թեկնածու Հայկունի Հարությունյանը:

Հայկունի Հարությունյանը 1970 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը, իսկ 1970-1974 թթ.-ին՝ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Նույն թվականից մինչև իր կյանքի վերջին օրը Հայկունի Հարությունյանը գիտամանկավարժական գործունեություն էր ծավալում Մանկավարժական համալսարանում՝ ավագ դասախոսից մինչև դոցենտ:

1984-1986 թթ. ղեկավարել է ՀՊՄՀ Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության, իսկ 2001 -2015 թթ.-ին՝ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնը: 2015 թվականից մինչ օրս Հայկունի Հարությունյանը նույն ամբիոնի դոցենտ էր:

Նա երկար տարիներ կրթել և մասնագիտական գիտելիքներով է զինել ապագա մանկավարժների բազմաթիվ սերունդների՝ նրանց փոխանցելով մաթեմատիկայի դասավանդման իր հարուստ փորձն ու գիտելիքները:

Բազմաթիվ գիտական հոդվածների, դասագրքերի հեղինակ է, որոնք մինչ օրս կարևոր ուղեցույց են վաստակաշատ մանկավարժի կրթած սերունդների համար:

Գործընկերների և սաների խոսքով՝ Հայկունի Հարությունյանի կյանքն ու գործունեությունը համակ նվիրում էր գիտությանն ու մանկավարժությանը: Վաստակաշատ մանկավարժին ու գործընկերոջը ուսանողներն ու մտերիմները կհիշեն որպես պատվարժան մարդու, սիրելի ընկերոջ ու անփոխարինելի մանկավարժի:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Հարությունյանների ընտանիքին՝ Հայկունի Հարությունյանի մահվան կապակցությամբ:

# «Երջանկության մասին, որ նվիրում է երգ»

Հայ ժողովրդական մանկական երգարվեստի պատմության մեջ հաճելի նորություն է «Արև, արև, եկ, եկ» մանկական երգերի ժողովածուի հրատարակումը:

«Մանկական երգերի երկլեզու (հայերեն և անգլերեն) ժողովածուն պատմական Հայաստանի տարբեր շրջանների երգերի համահավաք ընտրանի է՝ բաղկացած տարբեր ժանրերի 42 երգերից: Ժողովածուն ունի կից ձայնասկավառակ, արտասանության ուղեցույց, բարբառային և օտարալեզու բառերի բառարան, երգերի տեքստերի անգլերեն համառոտ թարգմանություն:

Գիրքը ձևավորված է Երևանի Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության կենտրոնի սաների ձեռագործ աշխատանքներով (ուսուցիչ՝ Լուսինե Մխիթարյան):

Ձայներիզում ընդգրկված են «Հայրիկ Մուրադյան» մանկական երգի-պարի համույթի տարբեր տարիների ձայնագրություններ:

Ժողովածուն նախատեսված է հայկական ժողովրդական մանկական երգի ժանրով հետաքրքրվող հայ և միջազգային երաժշտասեր հանրության համար»,- գրված է գրքի առաջաբանում:

«Արև, արև, եկ, եկ» մանկական երգերի ժողովածուն իմ երազանքն էր, որովհետև տարիներ շարունակ ղեկավարում էի «Հայրիկ Մուրադյան» մանկական անսամբլը, իհարկե, Հայրիկի խորհրդով, այն վատ, պատերազմի տարիներին,-ասում է Հասմիկ Հարությունյանը: -Ես հասկանում եմ երգի ուժը, ես հասկանում եմ երգը ինչպես կարող է երեխայի արժեհամակարգը ձևավորել, որ ինքը իր արմատներն զգա և իր գիտակցական կյանքում ավելի ամուր և վստահ, տիրոջ նման կանգնի հող ու ջրին և իր մշակույթին տեր: Ամեն երեխայի ոտքի տակ պետք է դնել այդ մշակույթը, որպեսզի իր մեջքն ուղիղ լինի և գլուխը բարձր: Սա սկիզբն է. թեև ես միշտ ասում եմ՝ սկիզբը օրոցքում է, բայց դա մեր մայրերի, մեծերի և մեր գործն է: Շատ ուզում եմ, որ երեխաները դառնան այս գրքի ընկերը, և երգը դառնա իրենց ընկերը:

Ձայնագրությունները արվել է տարբեր տարիների. իմ մանկական անսամբլի երեխաներն են: Գրքի մեջ մեծ սիրով ներառել եմ Հենրիկ Իգիթյանի կենտրոնի ասեղնագործության խմբակի երեխաների աշխատանքները, որովհետև ամեն մի երգը ինձ համար արվեստի գործ է: Ասեղնագործությունը նաև մտքի աշխատանք է: Կարծում եմ սրանով ես մի քիչ կատարել եմ իմ պարտքը երեխաների առաջ, որովհետև ամենաարժանավորն իրենք են, և վաղվա ծիլերը տեսնելու համար:

Ցավոք, փոքրերի խումբն այլևս չկա, անվճար տարածք չգտնելու պատճառով: Նրանք հիմա իմ լավ ընկերներն են: Իսկ «Շողակն» անսամբլը, որի երաժիշտները մասնակցել են ձայնագրություններին, ասուններ են, որ հիմա մեր ավագ սերնդի ժողովրդական մշակույթի կրողներն են:

Շնորհակալ եմ բոլորին, Հասմիկ Սևոյանին, ով ձևավորել է գիրքը: Շնորհակալ եմ ընտանիքիս անդամներին, առանց որոնց չէի կարող գրքի հրատարակման ֆինանսական ծախսերը հոգալ: Ուրախ կլինեմ, որ արժանավոր մարդկանց ընտանիք մտնի այս գիրքը»:

Գրքում զետեղվել է Հասմիկ Հարությունյանի «Երկու խոսք երջանկության մասին, որ նվիրում է երգը» ներածականը:

«Երգը մեր սեղանի հացն էր: Հայրս ասում էր՝ եթե տուն եկողներին հյուրասիրելու բան չունենաք, երգեք՝ ճամփու դրեք:

Այդ Սրբազան Հացով մեր տունը լիքն էր:




Դա մշեցի տատիս «Թագվորագովք»-ն էր, հորս ու մորս սրտառուչ զուգերգը՝ «Սիրուն տիկին»-ը, աշուղական անուշ երգերը, հոգեթով ռոմանսները, կոմիտասյան բյուրեղյա մեղեդիները, որ սիրում էինք երգել իրարից ձայն խլելով, որոնք նախ մեզանից մեկն էր սկսում, ապա դրանք բազմաձայնվում էին ու շաղիկ-ծաղիկ հյուսվելով թև առնում, տարածվում... Հետո ժողովրդական խաղիկներից ծնվում էին պարերգերը, որ մեզ ստիպում էին թև թևի տալ, շուրջպար բռնել...

Բայց երջանկության գագաթնակետն, անշուշտ, մեր ընտանիքի փոքրիկների խանդավառ երգն էր, նրանց մանկական անուշ ձայները, մայրենի լեզվի բանաստեղծականության անօրինակ դրսևորումները...

...Մենք, իհարկե, հասկանում էինք, որ երեխաներին մեր իմացածը փոխանցելն ամենօրյա ջանք է պահանջում: Դրա համար քիչ է երգ ու պար սովորեցնելը: Երեխան պիտի տեսնի, որ դու ինքդ էլ ես երգում, որ ընտանեկան, ընկերական հավաքույթներն առանց այդ երգուպարի չեն անցնում: Անձնական օրինակը. սա է մշակույթը փոխանցելու լավագույն ձևը:

Սերունդների միջև մշակութային կամուրջը գենետիկ հիշողության թելերից է հյուսվում: Հայ մշակույթի երախտավորներին ենք պարտական այսօրվա մեր հարուստ ժառանգության համար: Բայց եթե այդ ժառանգությունը միայն թղթի վրա մնա, եթե այն մեր հանապազօրյա հացը չդառնա, մենք դավաճանած կլինենք Կոմիտասին էլ, իր գործը շարունակողներին էլ... Այդ մտահոգությունն էլ տասնամյակներ շարունակ ինձ ստիպեց մտածել մանկական երգի-պարի խումբ ստեղծելու մասին: Հիմքը կար՝ Հարությունյան ընտանիքի փոքրիկները՝ Անուշը, Արուսյակը, Լիլիթը, Արամը, Հայկը, որոնց համար հայ ազգային երգը բնական միջավայր էր, սովորական բան, ու իրենք կարող էին օրինակ դառնալ ուրիշների համար:

Այսպես ծնվեց Հայրիկ Մուրադյանի անունը կրող մանկական երգի-պարի անսամբլը, որի կատարումների մի մասը դուք կարող եք ունկնդրել այս երգարանիս կցված սկավառակում:

Մանկական երգերի այս ընտրանին, որ նոտագրությամբ, տեքստերով ու ձայնագրություններով ներկայացնում եմ ձեզ, ՀԱՅՈՑ ՄԵԾ ՏԱՆ սրբազան ՀԱՑԸ նշխարքի պես բաժանելու խորհուրդն ունի:

Բարով վայելեք»:

# Ուսանողական ամառվա գույները

## «Ամառային դպրոց-2024» միջազգային ծրագիրը Հայաստանում

Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում օգոստոսի 26-31-ը «Ամառային դպրոց-2024» միջազգային ծրագրով անցկացվեց հետաքրքիր ու բազմաբնույթ ուսումնաճանաչողական շաբաթ՝ միջազգային ուսանողական ծրագրի մասնակիցների համար:

Ռուսաստանի Դաշնության տարբեր բուհերի և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ամառային դպրոցին մասնակցում էին նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողներ, իսկ աշխատանքները համակարգում էին մագիստրոսներ, ասպիրանտներ և բուհի գործընկեր՝ Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական, Մոսկվայի քաղաքային մանկավարժական, Հյուսիս-կովկասյան դաշնային, Հյուսիսային Օսեթիայի պետական, Ուրալի դաշնային համալսարաններից և կրթական այլ հաստատություններից:

Ամառային դպրոցի պաշտոնական բացմանը մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, ով ընդգծեց՝ Մանկավարժականում կարևորում են մի-

ջազգային համագործակցությունն ու կապերի ընդլայնումը: Նա ընդգծեց, որ աշխարհի հնագույն հարուստ պատմություն ու մշակույթ ունեցող Հայաստանում մասնակիցները կանցնեն հետաքրքիր ուսումնաճանաչողական դպրոց, որը կնպաստի իրենց զարգացմանն ու աշխարհաճանաչողության ընդլայնմանը, և երկար կմնա իրենց հուշերում:

«Եթե դուք ամառային դպրոցը նախընտրել եք ամառային հանգստից, դա արդեն իսկ փաստում է, որ կարևորում եք կրթությունը»,-ասաց Մարիաննա Հարությունյանը՝ մասնակիցներին ներկայացնելով ինտերակտիվ դասախոսություն՝ «Ժամանակակից կրթության գլոբալ հեռանկարներ. ինկլյուզիա և էքսկլյուզիա» թեմայով:

Բանախոսը ներկայացրեց գլոբալ կրթության կարևորությունը աշխարհի զարգացումներից հետ չմնալու տեսանկյունից, խոսեց նրա առանձնահատկությունների և տարբեր գործոնների մասին՝ կապված թվային իրականության հետ, ինչպես նաև երիտասարդության նպատակների վրա գլոբալ կրթության մարտահրավերների ազդեցության մասին:

Մ. Հարությունյանը խոսեց գլոբալ կրթության մասին որպես կրթական գործընթացի, ճգնաժամային իրավիճակներում նորարարական մոտեցումների ու ստանդարտներից դուրս գալու, իդեալական կրթության մոդելին ձգտելու անհրաժեշտության մասին:

Դասախոսությունը մասնակիցների հետ երկխոսության բնույթ էր կրում, և նրանք ներկայացնում էին իրենց մոտեցումները:

Պրոռեկտորն ընդգծեց՝ գլոբալ կրթությունը զարգացնում է մարդկանց աշխարհայացքը, որպեսզի կարողանան ղեկավարել արագ փոփոխվող իրականությունը: Նա խոսեց գլոբալ կրթության և ուսումնական ծրագրերի, գլոբալ կրթության ուսումնական մեթոդների, ուսուցչի և աշակերտի նորօրյա առաքելության, մեդիագրագիտության, միջմշակութային և ինֆորմացիոն գրագիտության կարևորության մասին:

Ծրագրի մասնակիցներին ողջունեց նաև ՀՊՄՀ Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի ղեկավարի տեղակալ, ծրագրի համակարգող Աննա Հախումյանը: Նա վստահեցրեց՝ մեծ աշխատանք են կատարել. հաշվի են առնվել բազմաթիվ գործոններ՝ ծրագիրը հանրահռչակելու, առավել մեծ թվով ուսանողների ընդգրկելու համար:

«Ամառային դպրոց» միջազգային ծրագրի մասնակից Հյուսիսային Օսեթիայի պետական համալսարանի արևելագիտության բաժնի երկրորդ կուրսի ուսանող Ռուսլան Գաճիևը խոստովանեց՝ ծրագիրը հագեցած է, մթնոլորտը՝ ջերմ ու մտերմիկ: Երկրից դուրս առաջին անգամ է մասնակցում նման ծրագրի և տպավորված է հայկական հյուրընկալությամբ:

Կուբանի պետական համալսարանի ուսանողուհի Նատալյա Պոտապովան բարձրագույն մաթեմատիկայի ապագա դասավանդող է, նաև տուրիզմի «դեսպան» և իր առաքելություններից է համարում տուրիզմը ՌԴ-ից դուրս ներկայացնելը՝ ընդգծելով. «Ես գիտեմ, որ Հայաստանը գեղեցիկ ու արևային երկիր է: Հույս ունեմ, որ կհասցնեմ այցելել քանգարաններ ու պատմամշակութային վայրեր, ինչպես նաև կներկայացնեմ իմ համալսարանը»:

Մոսկվայի պետական մանկավարժահոգեբանական համալսարանի ուսանող Աննա Զարեցկայան ռուսաց լեզվի և գրականության ապագա դասավանդող է, որ ներկայումս ասպիրանտական կրթությունը շարունակում է հոգեբանամանկավարժական ուղղությամբ: Խոստովանում է՝ հետազոտության մեջ պրակտիկ մասը Հայաստանում անցկացնելը նրա համար երազանք էր. «Սա ինձ համար կունենա նաև գիտական նշանակություն և արժեքավոր փորձ է ու հրաշալի հարթակ տաղանդավոր երիտասարդների հետ շփման, նոր հարաբերություններ ստեղծելու համար»:

Ամառային դպրոցի առաջին օրը մասնակիցները սովորեցին հայկական ազգային պարեր, ինչպես նաև մասնակցեցին հայկական Վարդավառի տոնակատարությանը:

Մեկշաբաթյա «Ամառային դպրոցի» ավարտն ամփոփեցին ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը և Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը «Ամառային դպրոց» ծրագիրը համարում է միմյանց հետ շփվելու, ճանաչելու, տարբեր երկրների մշակույթին ծանոթանալու և նոր կապեր հաստատելու, նաև մեր երկիրն ու մշակույթը ներկայացնելու լավագույն միջոց:

Մասնակիցները շատ տպավորված էին մեր երկրի պատմամշակութային վայրերով: Նրանցից մի քանիսը բլոգերներ էին և իրենց սոցիալական հարթակներում ներկայացնում էին Հայաստանն ու բուհը, ինչը կրկնակի կարևոր է բուհի կապերի ընդլայնման տեսանկյունից:

Իսկ մասնակիցները եզրափակիչ միջոցառման ժամանակ իրենց երախտագիտությունը հայտնեցին Մանկավարժական համալսարանին՝ արդյունավետ ծրագիր կազմակերպելու համար և հրաժեշտ տվեցին՝ կրկին վերադառնալու ակնկալիքով:

## Ծանոթացան կերպարվեստի և տեխնոլոգիայի դասավանդման առանձնահատկություններին

Օգոստոսի 18-ից 24-ը ՀՊՄՀ Աղավնաձորի ուսումնական բազայում անցկացվեց «Կերպարվեստ» և «Տեխնոլոգիա» առարկաների ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման ծրագրի այս տարվա առաջին փուլը: Վերապատրաստումն իրականացվեց ՀՊՄՀ-«Արտաս» հիմնադրամ համագործակցության շրջանակներում: Վերապատրաստող խմբում ներգրավված էին Շվեյցարիայի՝ բուհի գործընկեր մի քանի համալսարանների, ինչպես նաև Մանկավարժական համալսարանի դասախոսներ՝ մեթոդական աշխատանքներին հետևելու և թարգմանություններն իրականացնելու համար: Վերապատրաստմանը մասնակցեց Երևանի և մարզերի շուրջ 40 ուսուցիչ: 7-օրյա անվճար վերապատրաստումների ընթացքում ուսուցիչները ծանոթացան կերպարվեստի և տեխնոլոգիայի դասավանդման հմտություններին և դպրոցներում դրանց կիրառման առանձնահատկություններին:

ՀՊՄՀ Կերպարվեստի ամբիոնի դասախոս Նաիրա Մխիթարյանն ընդգրկված է վերապատրաստող խմբում: Նա նույն համագործակցության շրջանակում պրակտիկա է անցկացրել Շվեյցարիայի Ցյուրիխի արվեստի համալսարանում: Վստահեցնում է, որ այն շատ արդյունավետ և հետաքրքիր էր կատարելագործվելու, նորամուծություններին ծանոթանալու, փորձի փոխանակման, ինչպես նաև երկու երկրների կրթական և դասավանդման համակարգերը համեմատելու ու եղածը հաջողությամբ համադրելու տեսանկյունից:

«Վերապատրաստման ընթացքում հետևել և մասնակցել ենք դասավանդման և մեթոդական ողջ ընթացքին: Սա շատ հետաքրքիր ու կարևոր վերապատրաստում է հայ ուսուցիչների համար»,-նշեց ՀՊՄՀ դասախոսն ու հավելեց՝ նման վերապատրաստումները պետք է լինեն շարունակական. դրա կարիքը շատ կա: Մասնակիցներն էլ վստահեցրին՝ արդյունավետ ու հագեցած վերապատրաստում էր, որի ընթացքում կատարելագործվեցին և՛ որպես ստեղծագործողներ, և՛ որպես մանկավարժներ: Վստահեցրին՝ ձեռք բերած փորձն ու նորամուծությունները առաջիկայում հաջողությամբ կներդնեն իրենց դպրոցներում՝ նոր շունչ հաղորդելով կերպարվեստ և տեխնոլոգիա առարկաների դասավանդմանը:

*Մարիա ԱՂԵԿՅԱՆ*

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ